

Հավելված 1

Էթիկայի կանոններ

1. Շահերի բախում

- 1.1 Գնումների գործընթացի շրջանակներում շահերի բախում կարող է առաջանալ այնպիսի անձնական շահերի հետ կապված, ինչպիսիք են Բանկի աշխատակցի անձնական ներդրումները և ակտիվները, կամ այնպիսի նվերների և հյուրասիրությունների ընդունումը, որը իրենից որոշակի պարտավորվածություն է ենթադրում աշխատակցի համար:
- 1.2 Բանկի աշխատակիցներին արգելվում է ցանկացած տեսակի ներգրավվածություն այն հայտատուների հետ գնումների գործընթացին, որտեղ նրանք ունեն կամ կարող են ունենալ անձնական և ֆինանսական շահեր:

2. Տեղեկատվության գաղտնիություն

- 2.1 Գնումների հետ կապված տեղեկատվությունը համարվում է գաղտնի:
- 2.2 Այն ներառում է ցանկացած փաստաթուղթ կամ տեղեկատվություն, որը կազմում է գնումների գործընթացի մասը և դրանց վերաբերյալ ցանկացած բացահայտում կարող է՝
 - ստեղծել անբարենպաստ պայմաններ Բանկի կամ հայտատուի համար,
 - տրամադրել անարդար առավելություն հայտատուին,
 - բացասաբար անդրադառնալ Բանկի հեղինակության վրա:
- 2.3 Գնումների գործընթացին ներգրավված աշխատակիցները պետք է թույլ չտան, որ հայտատուներին մատչելի լինի գնումների գործընթացի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, մինչ այդ տեղեկատվությունը ամբողջովին հասանելի չէ գործարար հանրությանը:
- 2.4 Աշխատակիցները չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն բացահայտեն գնումների գործընթացի վերաբերյալ որևէ տեղեկատվություն այլ անձանց՝ բացառությամբ նման տեղեկատվություն ստանալու լիազորություն ունեցողների:
- 2.5 Գաղտնի տեղեկատվության բացահայտումը անհրաժեշտ է բացառել, քանի որ այն լրջորեն կարող է վտանգել արդարության սկզբունքները և Բանկի վստահելիությունը:

3. Նվերներ և հյուրասիրություններ

- 3.1 Առաջնակարգ նշանակություն ունի, որ գնումների գործընթացի ցանկացած փուլում ներգրավված աշխատակիցը չի կարող ընդունել ցանկացած տեսակի և արժեքի նվեր կամ հյուրասիրություն արտաքին աղբյուրից, որը դիմում է Բանկին՝ գործարար համագործակցության նպատակով, քանի որ այն կարող է համարվել կամ ընկալվել որպես բարենպաստ վերաբերմունք տվյալ սուբյեկտին:
- 3.2 Աշխատակիցները քաղաքավարի կերպով պետք է մերժեն նվերների և հյուրասիրությունների, նույնիսկ եթե դա ասոցացվում է պաշտոնական այցի հետ:

3.3 Ցանկացած նվեր պետք է վերադարձվի, և հայտատուն պետք է տեղեկացվի, որ Բանկի գնումների գործընթացում ներգրավված աշխատակիցներին չի թույլատրվում ստանալ նվերներ, քանի որ գնումների գործընթացում ներգրավված աշխատակիցները և հայտատուները կառավարվում են “Զրոյական հանդուրժողականության” քաղաքականության սկզբունքներով:

4. **Կոռուպցիա և խարդախություն**

4.1 Կոռուպցիան կարող է ի հայտ գալ գնումների գործընթացի ցանկացած փուլում՝ Բանկի որոշակի անձանց իմացությամբ և համաձայնությամբ կամ հայտատուի՝ միակողմանի թաքցված գործողությունների միջոցով:

4.2 Գնումների գործընթացում կոռուպցիան հիմնականում իրենից ներկայացնում է խարդախ գործողություններ և կաշառակերություն:

4.3 Ստորև նշված սահմանումները ցույց են տալիս կոռուպցիոն դրսևորումների տարածված տեսակները, որոնք, սակայն, սպառնիչ չեն՝

- խարդախություն՝ փաստերի խեղաթյուրումն ի վնաս հայտատուի՝ գնումների իրականացման, հայտատուի ընտրության և պայմանագրի կնքման գործընթացների վրա ազդելու նպատակով, որը ներառում է հայտատուների միջև պայմանավորվածություն՝ նպատակ ունենալով ստեղծել գների արհեստական և ոչ մրցակցային մակարդակ:
- կաշառակերություն՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ցանկացած արժեք ներկայացնող ապրանք կամ ծառայություն առաջարկելը, տրամադրելը, ստանալը կամ պահանջելը, որը ոչ պատշաճ կերպով է ազդում, անդրադառնում երրորդ կողմի վրա:
- էթիկայի կանոնների խախտում՝ շահերի բախման, տեղեկատվության գաղտնիության և նվերների ու հյուրասիրությունների վերաբերյալ դրույթների խախտում:
- շորթում կամ ճնշում՝ գործողություն, որով փորձ է կատարվում ազդեցություն կամ միջամտություն ունենալ ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերմանը կամ պայմանագրերի կատարմանը՝ անձին, գույքին կամ հեղինակությանը վնաս հասցնելու սպառնալիքների միջոցով:
- դավադրություն՝ երկու կամ ավելի հայտատուների պայմանավորվածություն կամ մշակված ծրագիր Բանկի կամ առանց Բանկի որոշակի աշխատակիցների իմացության՝ նախատեսված սահմանելու արհեստական և ոչ մրցակցային գների մակարդակ, որն ընդունելի չէ Բանկի համար:

5. **Մատակարարի վարքագծի կանոններ**

5.1 Բանկն ակնկալում է իր պոտենցիալ մատակարարներից բարոյական և էթիկական վարքագիծ և հավատարմություն դրանց ամենաբարձր չափանիշներին, ինչպես նաև խուսափում կոռուպցիայի ցանկացած ձևերից՝ ներառյալ կաշառակերություն, խարդախություն, շորթում և այլն:

5.2 Բանկն ակնկալում է, որ իր պոտենցիալ մատակարարները կտեղեկացնեն Բանկին ցանկացած իրավիճակի մասին, որը կարող է հանգեցնել շահերի բախման, այն է՝ երբ Բանկի որևէ պաշտոնյա կամ աշխատակից ունի կամ կարող է ունենալ Բանկի

պոտենցիալ մատակարարի բիզնեսում ցանկացած տեսակի շահ կամ տնտեսական կապ նրանց հետ:

- 5.3 Բանկն ունի “Զրոյական հանդուրժողականության” քաղաքականություն և չի ընդունում որևէ տեսակի նվեր կամ հյուրասիրություն: Բանկն ակնկալում է, որ իր պոտենցիալ մատակարարները չեն առաջարկի ցանկացած չափի արժեք ներկայացնող անվճար ապրանք կամ ծառայություն Բանկի աշխատակիցներին, որպեսզի հեշտացնեն, միջամտեն կամ օժանդակեն Բանկի հետ գործարար հարաբերությունների ձևավորմանը:
- 5.4 Վերոնշյալ սկզբունքների պահպանումը հաշվի է առնվում Բանկի կողմից մատակարարների ընտրության ժամանակ: Սկզբունքները խախտող հայտատուները կներառվեն Բանկի համար ոչ ցանկալի մատակարարների ցուցակում և կզրկվեն Բանկի կողմից անցկացվող մրցույթներին և գնառաջարկների ներկայացման հարցումներին մասնակցելու իրավունքից:
- 5.5 Բանկը ոգեկոչում է իր պոտենցիալ մատակարարներին բարելավել իրենց գործարար որակները համաձայն վերը նշված սկզբունքների:

Ծանոթացել եմ, համաձայն եմ վերոնշյալ կանոններին: